



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2011 թվականի N 117-Ա
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2011 թվականի մարտի 25-ի N 1618-11 գեկուցագիրը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 7-ի “Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով մշտական գործող միջոցառումային հանձնաժողով ձևավորելու, հանձնաժողովի գործունեության աշխատակարգը և միջազգային առողջապահական կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնի հետ փոխգործակցության կարգը հաստատելու մասին” N 39-Ա որոշման 1-ին կետով հաստատված N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն
<<Ռուզաննա Մանուկյան - հանձնաժողովի քարտուղար - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ>> :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

